# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի բնակավայրերի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/145 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի փետրվարի 3-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/145-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2025 թվականի դեկտեմբերի 3-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Համադրման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել նախատեսված աշխատանքների ծավալների և գնի նվազեցում:

**Փոփոխության նկարագրություն՝** Պայմանագրի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 3-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Պայմանագրի 5.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «5.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 102,265,610.00 (մեկ հարյուր երկու միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր տասը) ՀՀ դրամ, որից 17,044,268.33 (տասնյոթ միլիոն քառասունչորս հազար երկու հարյուր վաթսունութ դրամ երեսուներեք լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
2. Հավելված 1-ով ներկայացված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» աղյուսակի «Գումար» սյունակում նշված «103,329,015.00» թիվը փոփոխվել է «102,265,610.00» թվով:
3. Պայմանագրի Հավելված 1.1-ով և 2025 թվականի նոյեմբերի 14-ին կնքված համաձայնագիր 3-ով հաստատված «ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ»-ի փոխարեն հաստատվել է Համաձայնագիր 4-ի Հավելված 1-ով ներկայացված տարբերակը:
4. Պայմանագրի Հավելված 3-ով, Կողմերի միջև 2025 թվականի փետրվարի 28-ին կնքված համաձայնագիր 1-ի Հավելված 2-ով և 2025 թվականի նոյեմբերի 14-ին կնքված համաձայնագիր 3-ի Հավելված 2-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը փոփոխվել և հաստատվել է ըստ Համաձայնագիր 4-ի Հավելված 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** Պայմանագրի կատարման շրջանակում համադրման արդյունքում կատարվող աշխատանքների և ծավալների նվազեցման անհրաժեշտությունը և Պայմանագրի 8.5 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**